3015

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 107 - 25

Նախաձեռնող՝ *«ԷԿՈ ԱԳՐՈ» ՍՊԸ*
Մ. Մկրտչյան թաղ. 1 փող. թիվ 39 շին

Գործունեությունը՝ *Առինջ բնակավայրի Վ.Տերյան թաղամասի 15-րդ փողոց 2/2 հասցեում բնակելի թաղամասի կառուցում*
Կոտայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 107 - 25

«07» Մայիսի 2025թ.

Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի Վ. Տերյան թաղամասի 15-րդ փողոց 2/2 հասցեում բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷԿՈ ԱԳՐՈ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Առինջ բնակավայր

Ներածական մաս. «ԷԿՈ ԱԳՐՈ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Առինջ բնակավայրի Վ. Տերյան թաղամասի 15-րդ փողոց 2/2 հասցեում բնակելի թաղամասի կառուցում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը գտնվում է Ջրվեժ-Նորք հրաբխային սարավանդի սահմաններում, էռոզիոնահողմնահարման լանջերի վրա, որոնք ունեն հյուսիս-արևմտյան թեքություններ, համեմատաբար մեղմ անկումներ: Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ հորատանցքերով մինչև 20 մետր խորությամբ ստորգետնյա ջրեր չեն բացահայտվել, իսկ համաձայն գրականության տվյալների՝ մինչև 40 մետր:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԷՆՎԻՐՈՆՄԵՆՏԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS
РА ЕРЕВАН • ՀՀ ԵՐԵՎԱՆ

Կոտայքի մարզի Վ.Տերյան թաղամասի 15-րդ փողոց 2/2 հասցեում նախատեսվող թաղամասը հանդիսանում է Առինջ բնակելի թաղամաս ծրագրի մի մասը՝ չորրորդ հողակտորը: Հողամասը կազմում է 0.838616 հա, որից 28%-ը նախատեսվում է կառուցապատել՝ առավելագույնը 7 հարկ բարձրությամբ և 60%-ը՝ կանաչապատել:

Ընդհանուր կառուցապատումը բաղկացած կլինի 2 բազմաբնակարան՝ 1 մուտքանի և 1 բազմաբնակարան՝ 2 մուտքանի շենքերից, որոնք կունենան ստորգետնյա 1 հարկ՝ ավտոկայանատեղի և 5-7 հարկ բնակելի տարածքներ:

Շինարարությունը նախատեսվում է իրականացնել 3 տարում: Ստորգետնյա հարկերը անհրաժեշտության դեպքում կարող են ծառայել որպես պարզագույն թաքստոց՝ 400-450 մարդու համար: Այդ հարկերում նաև նախատեսված են երեք սանհանգույցներ, որոնցից մեկը նախատեսված կլինի սահմանափակ կարողությամբ անձանց համար: Նշված տարածքն ապահովված կլինի օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Շենքերի տանիքները նախատեսված են հարթ, ջրահեռացումը ներքին հորաններով նախատեսվում է միացնել ընդհանուր անձրևատար համակարգին: Վերգետնյա ավտոկայանատեղիները նախատեսվում է ջրաթափանց (գեոցանցով) մակերեսներով: Միջանցիկ տարածքների և աստիճանավանդակների դռները կլինեն հակահրդեհային և ինքնափակվող: Պատուհանները նախատեսված են էներգախնայող, երկխցիկ ապակե փաթեթներով:

Բոլոր բնակարանները և հասարակական տարածքներն ապահովված կլինեն հրշեջ փրկարարական անձնակազմի և նրանց սարքավորումների մշտական մոտեցման հնարավորությամբ: Հրշեջ ծորակների մոտ անհրաժեշտ ճնշում և ջրաքանակ ապահովելու համար նկուղային -3.30 նիշում նախատեսված է ջրամբար և պոմպակայան:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար կիրականացվեն համապատասխան միջոցառումներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի՝ համաձայն մատակարար կազմակերպության տեխնիկական պայմանի:

Գազամատակարարումը նախատեսվում է իրականացնել՝ համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին:

Բնակելի թաղամասի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին:

Նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը՝ 8386.16 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 2340 քմ (28 %),
- ճանապարհ, մայթ և այլ՝ 1006.16 քմ (12 %),
- կանաչապատման մակերես՝ 5040 քմ (60 %),
- ավտոկայանատեղի՝ 912.02 քմ,
- բնակարանների ընդհանուր թիվը՝ 171,
- ստորգետնյա ավտոկայանատեղի՝ 66:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 11500 խմ, որից հանվող 7500 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել համաձայն բարեկարգման, կանաչապատման նախագծի: Տարածքում առկա հողի բերրի շերտը 700 խմ ծավալով կօգտագործվի կանաչապատման աշխատանքների ընթացքում: Նախատեսվում է ոռոգումն իրականացնել կաթիլային եղանակով՝ հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար, անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է այդ տարածքներում ապահովել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավել ժամանակակից տեխնիկական միջոցներ,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից և այլն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր և կենցաղային աղբ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր և այլն:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր

ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Բնակելի թաղամասի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ և այլն:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, Աբովյանի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Աբովյանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

3. Կանաչապատումն իրականացնել համայնքի հետ համաձայնեցված՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
6. Մինչև կառուցապատման աշխատանքների սկսելն անհրաժեշտ է՝ սպասարկող կազմակերպությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան մշակել ինժեներական ենթակառուցվածքների վերջնական նախագծային փաստաթղթերը և դրանք համաձայնեցնել իրավասու մարմինների հետ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԷԿՈ ԱԳՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի Վ. Տերյան թաղամասի 15-րդ փողոց 2/2 հասցեում բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սվետլանա Կիզիրյան